

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Կ. Գրիգորյանի
- ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ՝ Ա. Հարությունյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Վ. Վարդազարյանի
- ՀՀ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ Հ. Մարգարյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2020 թվականի հունվարի 30-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության 2019 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

/Հ. Մարգարյան- ՀՀ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ /

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման և համայնքապետարաններում աշխատավարձի գծով առաջացած պարտավորությունների կտրաման գործընթացը առ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

/Վ. Մկրտչյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

4. ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում 2019 թվականի ընթացքում փնտրեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման արդյունքների և 2020 թվականի սուբվենցիաների փրամադրման հայերի ներկայացման ընթացքի մասին:

/Լ.Մուշեղյան-ՀՀ Արմավիրի մարզպետարանի
զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և
վերլուծության բաժնի պետ/

5. Գյուղափոխության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ իրազեկում:

/Իռա Փանոսյան- ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ/

6. Հայտարարություններ՝

<< Անուշ-Արմենիա >> ընկերության կողմից գյուղափոխական արտադրանքի մթերումների վերաբերյալ:

/Հ.Մաթևոսյան-ՀՀ Արմավիրի մարզպետ/

2020 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում իրականացվելիք <<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական փնտրեսությունների աջակցության փրամադրման>> ծրագրի վերաբերյալ:

/Հ.Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում գործող նախադպրոցական ուսումնական հասարակությունների լիցենզավորման գործընթացի վերաբերյալ:

/Հ.Մաթևոսյան-ՀՀ Արմավիրի մարզպետ/

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը շնորհավորեց նիստի մասնակիցներին Բանակի օրվա առթիվ՝ ցանկանալով ուժ, կարողություն, և որ բանակն էլ Սարդարապատի ոգով միշտ լինի անկուրրում, հաղթանակած, իսկ պաշտոնյաներն էլ իրենց գործունեությամբ անեն հնարավորը, որպեսզի արժանին մարտից բոլոր զինծառայողներին՝ շարքային զինվորից մինչև գերագույն հրամանատար:

Օրակարգային <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2020 թվականի հունվարի 30-ի նիստի օրակարգը հաստատելու մասին>> առաջին հարցով ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի հաստատմանը

ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2020 թվականի Հունվարի 30-ի նիստի օրակարգը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2020թվականի հունվարի 30-ի նիստի օրակարգը:

Օրակարգային երկրորդ՝ հարցով ԱԻՆ Արմավիրի ՄՓՎ պետ Հովհաննես Մարգարյանը ներկայացնելով վարչության 2019 թվականի գործունեության հաշվետվությունը՝ մասնավորապես ընդգծեց, որ Արմավիրի ՄՓՎ-ն 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքները կատարել է ամբողջությամբ, և հաշվետու ժամանակահատվածում վարչության կողմից թերացումներ և բացթողումներ չկան:

Ըստ Հ.Մարգարյանի զեկույցի, 2019թվականին մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անցկացվել են շտաբային ուսումնավարժություններ և օբյեկտիվ վարժանքներ, որոնք ընդգրկել են ինչպես քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտների հիմնահարցերը, այնպես էլ մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ պատրաստականության ապահովման խնդիրները:

Միաժամանակ նշվեց, որ հաշվետու տարում քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործման նպատակով ՄՓՎ կողմից ցուցաբերվել է մեթոդական օգնություն մարզի համայնքների, կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանների և պլան-ժամանակացույցերի ճշգրտման ուղղությամբ:

Անդրադառնալով 2019 թվականին մարզում գրանցված տեխնածին աղետներին՝ Արմավիրի ՄՓՎ պետը նշեց, նաև որ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է հրդեհի 620, կենցաղային 217, ավտավթարի 53, ջրահեղձման 1 և այլ բնույթի տեխնածին աղետների 67 դեպք: Ըստ նրա՝ 2018-ի համեմատությամբ ընդհանուր դեպքերի թիվն ավելացել է 383-ով՝ մոտ 64,5% տոկոսով:

Հովհաննես Մարգարյանն իր զեկույցում նշեց, որ Արմավիրի ՄՓՎ ՃԿԿ 911 ահազանգման կենտրոնում հաշվետու տարում գրանցվել է 89193 զանգ և սպասարկվել է 979-ը տարարնույթ արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ ահազանգ: ԱԻՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ ստորաբաժանումների և օպերատիվ խմբի կողմից արտակարգ դեպքերի, պատահարների հետևանքների վերացման նպատակով իրականացվել է 979 ելք, որից հրդեհների մարման նպատակով՝ 620, իսկ փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով՝ 337:

Արմավիրի ՄՓՎ պետը անդրադարձավ նաև փրկարարական ուժերի պատրաստականության բարձրացման, անձնակազմի կառավարման և իրավական ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքներին: Ավարտելով զեկույցը՝ նա առաջարկեց 2019 թվականի վարչության գործունեությունը նպատակաուղղել արտակարգ իրավիճակներում բնակչության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում մարզի վարչական տարածքում գործող հիմնարկ- ձեռնարկությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բարելավմանը, ղեկավար կազմի և ՔՊ մասնագետների պատրաստվածության բարձրացմանը: Հովհաննես Մարգարյանն ընթացիկ տարվա համար կարևորեց նաև բոլոր

մակարդակների ՔՊ և տարահանման պլանների, պլան-ժամանակացույցերի ճշգրտումը՝ առաջարկելով դրանք դարձնել առավել իրափեսական:

ԱԻՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության 2019 թվականի աշխատանքը գնահատելով լավ՝ մարզպետ Հ.Մաթևոսյանը համայնքների ղեկավարներին առաջարկեց ուշադրություն դարձնել քաղաքաշտապանության պլանների վերակազմանն ու ճշգրտմանը՝ ապահովելով հիմնական միջոցառումների պլանով նախատեսված ուսումնավարժությունների իրականացումը և ընթացիկ աշխատանքները: Ոլորտում նա կարևորեց նաև ազդարարման համակարգի վերազինումն ու արդիականացումը, հրդեհների կանխարգելմանն ուղղված միասնական աշխատանքը՝ միաժամանակ տեղեկացնելով, որ Երվանդաշատ համայնքում հրշեջ նոր հենակետ է ստեղծվելու:

Այնուհետև Արտակարգ իրավիճակների նախարարի և Արմավիրի մարզպետի կողմից պարվոզներով և շնորհակալագրերով պարգևատրվեցին մարզային իշխանության փարբեր ոլորտներ ներկայացնող պաշտոնյաներ, այդ թվում՝ նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետը և վարչության մի խումբ աշխատակիցներ:

Օրակարգային երրորդ հարցով մեկնաբանելով ներկայացված Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանի 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աննախադեպ ցուցանիշները՝ մարզպետ Հ.Մաթևոսյանը փաստեց, որ եկամուտների հավաքագրման արդյունքում Արմավիրի մարզն առաջափար է: Ըստ նրա՝ հաշվետու տարում սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 3 մլրդ 177,4 մլն դրամ: Տարեկան 3 մլրդ 97,4 մլն դրամ պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 102,6%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշն աճել է 12,0 տոկոսով կամ ավել է հավաքագրվել 577, 1 մլն դրամ: Համապատասխանաբար հողի հարկի հավաքագրումները կազմել են 728,7 մլն դրամ: Տարեկան 832,6 մլն դրամ պլանի պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 87,5%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշը աճել է 19%-ով կամ 190,9 մլն դրամով: Գույքահարկի հավաքագրումները կազմել են 1 մլրդ 300,7 մլն դրամ: Տարեկան 1 մլրդ 133,2 մլն դրամ պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 114,8%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշն աճել է 12,0%-ով կամ 212,5 մլն դրամով: Վարձակալական վճարների հավաքագրումները կազմել են 166,5 մլն դրամ: Տարեկան 167,4 մլն դրամ պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 99,5%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշն աճել է 8,8% ու կամ 17,9 մլն դրամով: Իսկ տեղական տուրքերի հավաքագրումները կազմել է 118,0 մլն դրամ: Տարեկան 108,9 մլն դրամ պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 108,3%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրումների ցուցանիշը աճել է 8,3%-ով կամ 25,5 մլն դրամով:

Ներկայացնելով համեմատական տվյալներ՝ մարզպետը նշեց, որ 2019 թվականին սեփական եկամուտների հավաքագրման 100%-ի շեմն անցել է 46 համայնք, իսկ 2018-ին դրանց թիվը եղել է 22: Միաժամանակ նշվեց, որ 2019-ին հավաքագրումների 70%-ից ցածր ցուցանիշ է ապահովել 7 համայնք, 2018-ին 27:

Բարձր գնահատելով համագործակցված աշխատանքի արդյունքում գրանցված ցուցանիշը և շնորհավորելով բոլորին այդ կապակցությամբ՝ մարզպետ Հ.Մաթևոսյանը

կոչ արեց համայնքապետերին այս պահից սկսած աշխատել հավաքագրումների ուղղությամբ՝ ընդգծելով, որ սեփական եկամուտների թերի հավաքագրում ապահովելու դեպքում չեն իրականանա համայնքների զարգացման ուղղված բազմաթիվ ծրագրեր, իսկ արդյունավետ աշխատանքի դեպքում դրանք կբազմապատկվեն՝ արդարացնելով բոլոր սպասումները:

Անդրադառնալով օրակարգային չորրորդ հարցի կապակցությամբ ներկայացված մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Լ.Մուշեղյանի զեկուցմանը, 2020 թվականին մարզում նախատեսված ծրագրերին՝ մարզպետն ընդգծեց, որ նախորդ տարվա ցուցանիշները գերազանցվելու են ոչ միայն ծրագրերի ֆինանսական մասշտաբների, համայնքների ընդգրկվածության առումով, այլև որակական տեսանկյունից: Ներկայացնելով սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր կարգը և դրանում փոփոխությունները՝ Հ.Մաթևոսյանը կարևորեց մասնավորի հետ համագործակցության հնարավորությունը՝ ընդգծելով, որ վերջիններիս կողմից ծրագրի 20 տոկոս և ավելի համաֆինանսավորման դեպքում պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինն ավելանում է 5 տոկոսով:

Նա անդրադարձավ նաև առաջնային համարվող պետական ծրագրերի իրականացմանը՝ նշելով, որ 2020-ին դրանք հիմնականում ուղղվելու են ճանապարհաշինական աշխատանքներին, ինչպես նաև 45 համայնքում 100կմ երկարությամբ ցանցերի վերանորոգմանը: Հ.Մաթևոսյանը ներկայացրեց նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ մարզերում բազմաբնակարան շենքերի էներգախնայողության և ջերմաարդյունավետության բարձրացման հնարավորությունները, որի արդյունքում ենթադրվում է շենքերի արտաքին պատերի ամրոցական ջերմամեկուսացում, ընդհանուր տարածքում պարուհանների փոխարինում, լուսավորության համակարգի ներդրում, արևային էներգիայի վահանակների տեղադրում: Նախատեսվող քայլերի իրականացումը հնարավորություն կտա բնակիչներին 50-60 տոկոսով կրճատել գազի և էլեկտրականության համար նախատեսված ծախսերը:

Օրակարգային հինգերորդ հարցի կապակցությամբ մարզպետն անդրադարձավ սպանդանոցային մորթի պարտադիր իրականացմանը և այդ ուղղությամբ կատարված գործնական քայլերին: Նա ընդգծեց, որ հուլիսի 2-ից այս թեմային այլևս չեն վերադառնալու, քանի որ խնդրով շահագրգիռ կողմերի ծայնը լսելի է դարձել պետական կառավարման բոլոր մակարդակներում, և կառավարության ղեկավարի կողմից խնդրի կարգավորմանն ուղղված համապատասխան հանձնարարականներ են տրվել և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին և մարզպետարաններին, որոնց ուղղությամբ ամենօրյա ռեժիմով աշխատանքներ են տարվում: Մարզպետը հավելեց նաև, որ Սննդի անվտանգության տեսչության մարզային կենտրոնի հետ միասին մարզպետարանը ձևավորել է սպանդանոցների նախընտրելի քարտեզ, որով կլուծվի սպանդանոցների սփռվածության և հասանելիության խնդիրը:

Այնուհետք է կոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության պետ Իոսա Փանոսյանը համառոտ ներկայացրեց 2019 թվականին Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած գյուղատնտեսական ոլորտի նոր ծրագրերը մասնավորապես՝ ՀՀ-ում 2019-2024 թվականների փավարարությունների զարգացման, Փոքր և միջին <<խելացի>> անասնաշենքերի կառուցման և ՀՀ -ում 2019-2023թթ-ի ոչխարաբուծության, 7 այծաբուծության զարգացման պետական

աջակցության ծրագրերը, նշել պայմաններն ու պետական օժանդակության ծրագրերից օգտվելու առավելությունները: Նա անդրադարձավ որոշ ծրագրերում կատարված փոփոխություններին ու լրամշակումներին:

«Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը հանդես եկավ նաև մի շարք հայտարարություններով: Նա ներկայացրեց «Անուշ-Արմենիա ընկերության կողմից անսահմանափակ քանակությամբ սև սալոր, ծիրան և այլ տեսակի մրգեր մթերելու առաջարկությունը՝ տեղեկացնելով, որ ընկերության աշխատակիցներն առաջիկայում կայցելեն համայնքներ՝ գյուղացիական տնտեսություններին հանդիպելու, պայմանավորվածություն ձեռք բերելու և համապատասխան պայմանագրեր կնքելու նպատակով: Նա մանրամասներ ներկայացրեց նաև 2020 թվականին մարզում իրականացվելիք «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության տրամադրման» ծրագրի վերաբերյալ, ապա անդրադարձավ համայնքներում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացը սեղմ ժամկետում կազմակերպելու անհրաժեշտությանը՝ ընդգծելով, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն նախադպրոցական կրթական ծրագրի լիցենզավորումը պարտադիր պահանջ է և հավելելով, որ նախարարության մուտքագրված հայտերը հիմնականում մերժվում են՝ ուսումնական տարածքների նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի բացակայության պատճառով:

Օրակարգային հարցերի և հայտարարությունների քննարկման ու ամփոփման ավարտից հետո «Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

03.06.2020



VERIFIED OCSP 03.06.2020 11:35:07 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Արձ.՝ Մ.Առուշանյան